ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 փետրվարի, 2022 թվականի N 6-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2021 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

    1. Հանրային հեռարձակողի խորհրդի 2020 թվականի հունվարի 20-ի № 6-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
    2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձին հաստատելու և աուդիտ իրականացնող անձի ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափը սահմանելու մասին հարցը:
    3. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձին հաստատելու և աուդիտ իրականացնող անձի ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափը սահմանելու մասին հարցը:

4. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձին հաստատելու և աուդիտ իրականացնող անձի ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափը սահմանելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

15 փետրվարի, 2022 թվական

ք. Երևան